ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/93 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մեդալների, կրծքանշանների (առաջադիմության մեդալ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.07.2022թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաբայան
Գոհարիկ Խաչատրյան
Իվետա Իսրաելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝ Սուսաննա Ազատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ
2	Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ		Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	
		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	826 000	605250	605250	630000	756000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հավելված 1.3-ում նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը անհասանելի է, անհրաժեշտ է լրացնել ճիշտ հղումը կամ դրա բացակայության դեպքում ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի համապատասխան հավելվածը:
- առաջարկվող ապրանքի տեխնիկական-բնութագիրը /ապրանքի ամբողջական նկարագիրը/ հստակ չէ, անհրաժեշտ է այն հստակեցնել, ներկայացնելով կոնկրետ մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4"1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ հուլիսի 28-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 28.07.2022թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կարինե Բաբայան
	Գոհարիկ Խաչատրյան
	Իվետա Իսրաելյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝	Սուսաննա Ազատյան

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

7. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

7"2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18"05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ. Մանուկյան /նախագահ/

---------- Կ. Բաբայան

---------- Գ. Խաչատրյան

---------- Ի. Իսրաելյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/